

Ս Ե Ի Ա Ն Ա Յ Վ Ա Ն Ք Ը

Մ Ե Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա.

Պարսկական ու տաճկական լծից հայերին ազատագրող Ռուսաստանը իւր տիրապետութեան տակ անցնող հայ ժողովրդի մէջ աստիճանաբար սկսեց մտցնել ռուսական կարգ ու կանոնը:

Աւատական արեւելեան պետութիւնների հպատակ հայերը սովոր չէին որ ոչ իրաւակարգի, օրինապահութեան, քանի որ աւատատու եւ աւատատէր իշխանները քմահաճոյքի, անձնական տրամադրութեան ու բնատուր խառնուածքի հիման վրայ տիրել եւ ոչ թէ կառավարել են այդ ժողովրդին:

Աւատական դրութիւնը հայ ժողովրդին ուժասպառ անելով, տնտեսապէս կամ նրւթապէս դժուարութիւններ յարուցանելով, չէր զրկում նրան իր ազգային ինքնուրոյնութիւնը արտայայտելու հնարաւորութիւնից, իւր ներքին կեանքը ազգային սովորութիւններով տնօրինելուց:

Հայ վանքերն էին հայ ժողովրդի ազգային ամբողջութեան ու ինքնուրոյնութեան արտայայտութեան կենդրոնները: Վանքերն էին նաեւ վարչական կենդրոններ՝ առաջնորդարաններ, ուստի եւ մահմետական տիրապետողները այդ կենդրոնների եւ դրանց առաջնորդների վրայ էին առաւելապէս ուշք դարձնում:

Այս դրութեամբ հայ ժողովրդի մի խոշոր մասը եւրոպական միապետական կազմակերպութիւն ունեցող ռուսաց պետութեան իշխանութեան տակ անցաւ, ուստի եւ ռուս իշխանութիւնը հայ ժողովրդի ռուսացման ու ռուսական պետութեան հետ միացման քաղաքական աշխատանքը հայ եկեղեցու եւ վանքերի համար կանոնադրութիւն մշակելուց սկսեց, տալով 1836ի պօլօթէնեան, որը որքան եւ հայ աղբիւրներից քաղուած տեղեկութիւնների հիման վրայ էր կազմուած, սակայն իւր մէջ կրում էր բիւրօկրատիկ կառավարութեան տարրեր եւ հայ եկեղեցուն ռուսական միապետութեան շահերին ծառայեցնելու բաւական յօդուածներ: Ռուս եկեղեցին Պետրոս Մեծից

այդ վիճակին էր հասել, բնականաբար ռուս միապետութիւնը օտար եկեղեցիների համար էլ նոյն քաղաքականութեանը դիմեց:

Այս կանոնադրութեամբ հէնց հայ եկեղեցին իւր աւատական վիճակից ելաւ, միապետական ոգու կնիք ստացաւ ու աստիճանաբար սկսեց աւելի մի պաշտօնական, ստոր ձեւականութեան ենթակայ հիմնարկութիւն դառնալ, կորցնելով իւր կենսունակութիւնը, իւր ժողովրդական սկզբունքների մի քանիսը:

Սրա վրայ աւելցաւ եւ Ռուսահայ մտաւորականների 60 ահան թուականների շեշտուած «մտրակողական» քննադատական շարժումը ծնունդ առած հիւսիսում, աղբիւր ունենալով եւրոպական պետութիւնների մի քանի տուեալները, որոնք սակայն ներկայ դէպքում մեր ժողովրդի դարգացմանը օգտակար չեղան:

Հայ եկեղեցու, վանքի արժէքը մեր կեանքում մանաւանդ օտարի լծի տակ ապրելու շրջանում կենսակրթական ու ազգային ամբողջութեան հաւաքման նպաստող է եղել: Աշխարհիկ դարգացման ջատագով մտաւորականները կենդրոնից, բուն ժողովրդից կտրուած լինելով չկարողացան ըմբռնել այդ ուրոյն վիճակը. մամուլի, մասնաոր դրուածքների միջոցով հայ եկեղեցու բարեկարգութեան կարեւոր հարցը վերջը հայ եկեղեցու դէմ վատաբանութեան, անգամ հակաեկեղեցական քարոզութեան վերածեցին 1905ի ռուսական յեղափոխութեան շրջանում, որի հետեւանքները եղան հայ եկեղեցու արժէքի նսեմացումը, այդ պատմական հիմնարկութեան թուլացումը, վանքերի հետզհետէ հանդէիլը ապա եւ ամայացումը հայրենի դնահատելի յիշատակների (որոնց պահպանութեան գործով այժմ նորից սկսել են զբաղուել), վերջապէս հայ մարդու մէջ կրօնական անտարբերութիւն յառաջ բերելը:

Այդ երկու մեծ ոյժերը ռուս քաղաքականութիւնը եւ հայ մտայինների անընդհատ հակաքարոզը հայ եկեղեցուն եւ եկեղեցականներին հանեցին իրենց բուն կոչման ուղիից, դարձրին նրանց աշխարհիկ ոգւով գործող ու ապրող: Այժմ զգացուում է այդ ուղութիւնների արգիւնքը:

Ընդհանուր հոսանքի ենթարկուեց եւ Սեւանայ մենաստանն, որ միակ անապատն է ռուսահայոց ու ան էլ դարձաւ ձգնարանից մի

սովորական վանք: Եթէ այժմ էլ կան հետաքրքրուողներ մտայիններէց Սեւան գնացողներ, այդ առաւելապէս բնութեան սիրահարներն են: Երջակայքի ցեղերէց ուխտի եկող հայ գիւղացիները հին աւանդական-պատկանական սովորութեամբ են գնում ուխտի, այն էլ տարուէ տարի պահաս թուով ցոյց չտալով ուխտաւորներէ ջերմեռանդութիւն ու ուխտի գնացողի նպատակի գիտակցութիւն:

Նախկին ոռոսահայերի այս միակ անապատ ճգնարանը դարձաւ ԺԹ.րդ դարուն թափացքում մի սովորական վանք, որի արժէքը այժմ վանքի կղզու վրայ շինուած լինելը եւ Գեղամայ ծովափում գտնուելն է եւ ոչ սոյն ուսումնասէր եւ առաքինի կրօնաւորներ ունենալը, որոնցմով Սեւանայ անապատը Գեղարքունեաց աշխարհում երբեմն երբեմն ուշադրաւ էր դառնում՝ կաթողիկոսներ տալով հայ ժողովրդին, իրեն մօտ քաջելով հայ իշխաններին: Կմախքացման շրջանն ապրեց յատկապէս նախկին ոռոսահայ եկեղեցին ԺԹ.րդ դարում, դրա հետ եւ Սեւանայ մենարանը: Այդ պատմական հասարակական զարգացումը աւելի ըմբռնելի կը լինի, երբ համառօտակի վերլիչներ այդ խոհերի խողովաների վայր մենարանը, ուր հին եւ նոր աստուածներ յաւիտեական ուժեղ թափով պայքարն է կատարուել դարեր շարանուակ, որ այնքան իմաստալի ու էլ աւելի գեղարուեստէն նկարել է Լ. Շանթ իւր «Հին Աստուածները» դրամայում:

Բ.

Սիւնեաց աշխարհի երրորդ գաւառը կազմող Գեղարքունին, հին խաղերի աստրեստանցոց դէմ մղած անհաւասար ու երկար պատերազմների ապաստանարան է եղել, ու իրենց լեզուով Գեղամայ ծովափին Սեւան (ծովակ)անունը տալով, ծովափնեայ ժայռերին սեպածեւ արձանագրութիւններ թողնելով խաղերը անհետացել են, ժառանգութիւն թողնելով այդ ամէնը հայերին:

Լեռաշխարհ, խորածոր, սեպածեւ ժայռերով, խոր այրերով հարուստ Սիւնիքը Բագրատունիների ձեռքով Այրարատի քաղաքական կեանքի վերածնութեան շրջանի սկզբում խոշոր դեր է կատարում հայ մտքի զարգացման համար իր ամուր տեղերում ապաստանարան ընձեռելով Թ.Փ.րդ դարում Փոքր եւ Մեծ Հայքի որոշ տեղերից յու-

նական հալածանքից հեռացող կրօնաւորներին: Յունաց Ռոմանոս կայսրը հալածանք է սկսում հայ եկեղեցականների դէմ, ի թիւս որոնց եւ կրօնաւորների, որոնց ամենալաւ ապաստանարանը դառնում է Սիւնեաց աշխարհը:

Կրօնաւորների եւ ճգնաւորների համար աշխարհի մարդկանց հետ յարաբերութիւնն ունենալու հնարաւորութիւնից դուրկ լինելը, դժուարամտչելի տեղերը ամենակարեւոր պայմանեցից մէկն է, իսկ Սիւնեաց աշխարհը հէնց այդպիսի էր. «ամուրք անառիկք ի մարդկան հնարից հեռացեալք են» ասած է այդ երկրի գաւակ պատմիչ Օրբէլեանը:

Բագրատունիների հետ խնամէական կապ հաստատելով Աշոտ իշխանաց իշխանի դուստր Մարիամ իշխանուհին կնութեան առնելով Վասակ Գարուտ Սիւնեաց իշխանը, ինքը եւ իր յաջորդները եւ իրենց կանայք սկսում են երկիրը ճոխացնել մենաստաններ, անապատներ, եկեղեցիներ կառուցանելով, կարծես մրցութեան մտնելով Բագրատունիների հետ, որոնք իրենց հերթին Անիից սկսած վանքեր կառուցանելով դէպի Սիւնեաց երկիրն են գնում:

Բագրատունիք Հրազդանի ափերն էին նկարագարում երկնաւայց վանքերով, Սիւնեաց իշխանները Գեղամայ ծովափի ափերին էին վառում կանթեղներ «հրեշտակերամ կրօնաւորներ եւ աստուածարնակ առաքինարաններ» շինելով:

Արարական արշաւանքներից յետոյ աւերած հայ աշխարհի սիրտը կրկին բարախել էր. վերածնութեան շրջանն էր սկսում Թ.Փ.րդ դարում զարգանալով մինչեւ ԺԳ.րդ դարը, ձեռնտուութեամբ հայ իշխանների եւ հայ մտքի աշխատաւոր վանականների: Չափազանցութիւն չհամարենք Օրբէլեանի այն տեղեկութիւնը, որ թաթարներից աղատուում են 150 մենաստան: Անշուշտ այս բոլոր մենաստաններն էլ կենդանուներ չէին գրի, գրականութեան, արուեստի զարգացման, սակայն դոքա հայ մարդու ուրոյն կրթութեան ձգտման հանգրուան-պահապաններ էին, մտքի ամրութիւններ ընդդէմ խոյամ հակառակ տարրի քայքայման եւ ապագայնացման:

Գեղարքունեաց ծովափից ելնող միակ Հրազդան գետի վերայ կային Թեղենեաց, Ս. Աստուածածնի, Նեղոսի (Արգաշուն գիւղի

մօտ), Բջնու, Մաքրավանքի, Կեչառիսի, Կարինիսի վանքերը: Սեւանայ վճիտ ծովակը զարգարուած էր Սեւանայ, Մարդաղանեաց, Շողազայ, Վանիվանինց, Կոթայ Ս. Աստուածածնի (այժմ Ն. Աղիաման) եւ այլ վանքերով եւ անապատներով: Սիւնիքն ինքն եւ Գեղարքունեաց սահմանակից Վայոց ձորը աւելի եւս հարուստ էին անապատներով, այնպէս որ Բաղաց դաւառում (Ղափան) ըստ Օրբէլեանի կար 48 վանք, Սիւնիք ինքն ունէր 18 վանք, Տաթեւ, Երիցավանք եւս, Վայոց ձորն 6 վանք, Խոտակերից, Թանահատ, Գնդաց վանք, որի համար պատմիչն ասում է թէ Սիւնեաց Սոփիա տիկինը շինել տարուց յետոյ ասում է, «Մատանի էր անակն Վայոցն ձոր, շինեցի դաս եւ եղի ակն ի վերայ»:

Սիւնեաց աշխարհի վանքերի մէջ հոյակապ էր Տաթեւի վարդապետարանը (Օրբէլեան 1910, էջ 133 եւ 226); աչքի էր ընկնում Վայոց ձորում Խոտակերաց վանքը, Գեղարքունիքում Մաքրինոցաց (Օրբէլ. 132-133) ապա եւ Սեւանայ անապատը, որի իսկական անապատական կեանքի հիմնադիրը պէտք է համարել Մաշտոց վանականին, յետոյ ընտրուած կաթողիկոս (Թ. դարում), որ ապրում էր միահանդերձ եւ բոկոտն (Կիր. Գանձ. էջ 45), որը «լուկ բանջարով զընդհանուր պէտս վճարեալ ապրէր» (Յովհ. Կաթ. Դրասխանակերտցի, էջ 230):

Գ.

Ճգնաւորական կեանքը յատկապէս Գ. եւ Դ. դարերում տարածուեցաւ քրիստոնէական աշխարհի մէջ, ի թիւս որոց եւ Հայոց աշխարհը: Գրիգոր Լուսաւորչի համար Ագաթանգեղոս (զլ. ՅՀԶ) ասում է որ երթեալ... յայրս եւ ի քարածերպս երկրին բնակեալ լինէր եւ ի կատարս լերանց»: Հոգեւորականների միայն յատուկ չէր աշխարհից հեռանալը, այլ եւ աշխարհականներին, իշխաններին, որոնք կրօնի ուժեղ ապրումների համար յարմարագոյն տեղ անապատներն էին գնում: Մեղանում Լուսաւորչի ամոլ լծակից Տրդատն եւս «սիրեաց զվարս միայնաւորութեան որպէս զսուրբն Գրիգոր»: Լուսաւորչի օրինակը խրատուսական էր եւ Գինդեայ ըստ Բիւզանդի պատմութեան (Զ. 16) «էր տեսուչ ամենեցուն, որք միանգամ վասն սիրոյն Աստու-

ծոյ յաշխարհէ էին մեկնեալ եւ յանապատս բնակեալ . . .»: Ճգնաւորական կեանքը շարունակուեց եւ Թ. դարում առաւել զարգացաւ: Յովհաննէս կաթողիկոսը տեսել էր Սեպուհ լերան վրայ խորագնազդեստներ, կրօնաւորներ, որոնք «առ ստորոտով լերինն կալեալ կայանս . . . զհարկաւոր պէտս մարմնոյն վճարէին»:

Այս օրինակ կենցաղի յարմար վայրերից էին Սիսական աշխարհը, Վայոց ձորը. եւ կենցաղը զարգացաւ, առաջ բերելով համայնական կենցաղ վարող խստակրօններ «էին յոյժ բազմութիւնը հեռացեալք ի հանդերձից եւ ի մարմնաւոր կերակրոց եւ ցրուեալք ընդ քարաժայռս եւ ընդ խորածորս վայրիցն մշտնջենաւոր աղօթից պարապէին . . .» (Օրբէլ. ԽԴ.):

Օր ու գիշեր աղօթող եղբայրներ էին դրանք, որոնք խմբերի բաժնուած «մշտապաշտօնք էին», մի խումբը աղօթում էր, միւսը հանգստանում եւ այսպէս անվերջ եւ անընդհատ: Այս օրինակ կենցաղով էր Գեղարքունիքում Մաքրինոցաց վանքը, որը իր ուրոյն աշխարհայեացքի տէր մարդիկը ունէր:

Այսպիսի միջավայրում մնում էր Սեւանայ անապատի հիմնադիր Մաշտոց վանականը, որը Բագրատունեաց աշխարհից ելլելով բնակում է Սիւնեաց երկիրը եւ ճգնատեղի ընտրում Սեւանը: Մինչեւ Մաշտոց Սեւանայ անապատ լինելու մասին եղած տեղեկութիւնները անորոշ են:

Սեւանի անապատ դառնալուն բաւական նպաստում էր այն հանգամանքը, որ նա դտնուում էր կղզու վերայ: Գեղամայ ծովակի հիւսիս արեւմտեան ծայրում գտնուող այդ կղզին ընդ ամէնը 850 մետր երկարութիւն 300 մետր լայնութիւն ունի: Կղզու վրայ քիչ ծառեր կան, հարուստ է ծաղիկներով, ամառը գրաւիչ օդ ունի, ձմեռը ցըրտաչունչ է: Խոկումների, առանձնանալու յարմար վայրեր ունի:

Այժմեան Սեւանայ մենարանն այցելողը կը տեսնէ եւ կը լսէ, որ Մաշտոց ճգնաւորական կեանքի դժուարին ձեւեր է ունեցել, ապրելով նաեւ Սեւանայ կղզու դիմաց գտնուող «Մաշթոցներ» կոչուող բլրում, ուր այժմեան Դիլիջան Երեւան տանող խճուղին անցնում է, ապա Սեւանայ կղզու արեւելեան մասի ծովի խորագոյն տեղում ծո-

վահայեաց ժայռի դժուարամատչելի ալ-
բուս, շուրջ ինը տարի, ապա հարաւային
ծովափնեայ անապատի մօտ կառուցուած
հազիւ մի մարդ տեղաւորող խուղում, ապա
կզոյւ դագաթում, կարծէք թէ փորձելով
ճգնաւորական կենցաղի բոլոր ձեւերը :

Սեւանում հեթանոսական հին տաճարի
տեղ Մաշտոց քրիստոնէական խաչն է բար-
ձրացնում նորից, եթէ ընդունենք միայն որ
Լուսաւորիչն այստեղ կրօնաւորներ է ու-
ղարկել եւ ինքն ապրում էր «ընդովք թրջե-
լովք» (Ասողիկ Գ.3) :

Սիւնեաց Վասակ Գարուռի կինը Մա-
րիամ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու
վանքեր է շինում Գեղարքունեաց աշխար-
հում՝ ապա Մաշտոցի համբաւը լսելով դա-
լիս է Յամաքարերդ ու Մաշտոցի ձեռնտու-
ութեամբ շինում է Առաքելոց ու Մարիամ
Աստուածածին վանքերը (874) : Աշոտ իշխա-
նաց իշխանն ալ դալիս է «ի տեսութիւն
սրբոյ հօրն» — Մաշտոց վանականին եւ
նուիրում է ըստ ոմանց կայսրից, ըստ այլոց
Փոտից նուէր ստացած խաչափայտի մի փո-
քրիկ մասը, աստուածընկալ սուրբ նշանը,
որը ցայսօր մնում է անապատում եւ Գե-
ղարքունեաց ու Մաղկաձորի շրջանի ամենա-
մեծ սրբութիւնն է, որին ուխտի գնում են
ամէն տարի ահապին խմբերով, իշխանը
նուիրում է նաեւ հողեր ու կալուածներ
(Օրբէլ 218) :

Մաշտոց անապատի եւ վանական կեան-
քի հիմք դնելով զբազում է եւ գիտութեամբ,
խմբագրում է այն ծիսարանը, որ ցայսօր
իւր իսկ անունով «Մաշտոց» կոչուում է
(հմմտ. Կիրակոս էջ 45) : Գէորդ Բ. Գառ-
նեցու մահուանից յետոյ ընտրուում է կա-
թողիկոս 897ին, վարում է այդ պաշտօնը
7 ամիս միայն եւ վախճանում է 898թուին,
թաղուում է Գառնիի մէջ (Ասողիկ էջ 147) :

Եթէ ժամանակի անապատներից ոմանք
յայտնի էին իբրեւ անհանգիստ, մշտապաշ-
տօն վանքեր (օրինակ Թանահատ, Երիցա-
վանք), ոմանք տնանկների, աղբատների
ապաստանարան (ինչպէս Հոռոմոսի վանք),
ապա Սեւանը Մաշտոցի շնորհիւ դառնում
է ընթերցասիրաց անապատ, ուր որ աղօթ-
քին ընթացակուում էր ընթերցասիրութիւ-
նը, այնպէս որ Թ-Թ.րգ. դարում Սեւանը
դառնում է ուսումնական կենդրոն (Օրմա-
նեան, Ազգապատում էջ 1158) : Այս շրջանում

բացի Մաշտոցից Սեւանի միաբաններից ըն-
տրուում են երկու կաթողիկոս՝ Ստեփանոս
970 եւ Սարգիս 992 թուին, վերջինս
մասին Ասողիկ ասում է որ ուսումնական անձ
էր (էջ 276) :

Սիւնեաց աշխարհի ծաղկման շրջանում
այսպիսով Գեղարքունին Սեւան անապատով
Թ-Թ. դարերում կարեւոր դեր է խաղում,
մի կողմից ճգնաւորներ եւ միւս կողմից
գիտնականներ տալով :

Դ.

Անապատական կեանքի վանքերի ծաղկ-
ման երկրորդ տեսանկի շրջանը մեզանում
սկսում է դարձեալ Սիւնեաց աշխարհից-
Մեծ Անապատից Ժէ.րգ. դարում, Շահ Ար-
բասի արշաւանքից եւ հայերի մեծ գաղթից
յետոյ : Այդ ծաղկման շրջանում վերական-
գանանում է նաեւ Սեւանայ անապատը եւ շա-
րունակում է իւր կենդանութիւնը պահել
ցայսօր, ի հարկէ հետզհետէ հասարակական-
պատմական հոսանքներին եւ ազդեցութիւն-
ների տակ. փոխելով իւր նպատակը, անա-
պատական կենցաղի ձեւերը :

Շուրջ 7 դարու պատմութիւնը՝ Ժ-Ժէ.
Սեւանի անապատի անորոշ է, խիստ հա-
տակոտոր տեղեկութիւններ կան, որոնք նո-
րութիւն չեն տալիս :

Ժէ.րգ. դարու սկզբում, Այրարատի ա-
ւերումից եւ ժողովրդի տեղահանութիւնից
յետոյ Սիւնեաց աշխարհը, որ համեմատա-
բար քիչ էր տուժել. նորից սկսում է հայ
գրականութեան, գիտութեան, հայ ժողո-
վրդի մշակոյթով պարապելու պատուաւոր
աշխատանքը եւ այդ տեղից ծաւալում
սփռում է գանազան կողմեր :

Վերածնութեան լիակատար մանրա-
ման տեղեկութիւնները տալիս է Առաքել
Վ. Դաւրիժեցի իր պատմութեան ԻԱ.—ԻԹ.
գլուխներում, փոքրիկ ընդհատումներով
նկարագրում է վերածնութիւնը Մովսէս եւ
Փիլիպպոս կաթողիկոսների ժամանակ, որը
շարունակուում է ապա յաջորդ հայրապետ-
ների օրօք :

Մեծ գաղթից յետոյ հայ երկիրը ամա-
յանում է, խոպանանում է, վանքերն էլ ան-
տէր ու անտիրական մնալով աւերում են :
«Իսկ եկեղեցիք եւ վանօրայք ամենեքեան
անչուք եւ անպատիւք, բնաւին կողոպտեալք
ի զարդուց եւ ի սպասուց, մինչ զի եւ սուրբ

սեղանն եւս ամենեւին մերկ եւ բաց: Բազմաժամանակեայ փակեալ դրամք խաւար...» եւն եւն (էջ 290):

Գիրն ու զպրութիւնը վանքերում էր տեղաւորուած, երբ սրանք խափանուում էին, ընկան է որ զպրութիւնն էլ մոռացութեան կը արուէր «ոչ բնաւ ընթեռնուին գիրս, ասում է պատմագիրը, այլ էին փակեալ եւ լռեալ մատեանք աստուածայինք...» (էջ 290): Խիստ մտայլ գոյներով է նկարագրում Դաւրիթեցին մինչեւ վերածնութիւնը եղող կրօնաւորների, առհասարակ հոգեւորականների կեանքը (համատ. էջ 288—289):

Այսպիսի անմխիթար վիճակ ունէին վանքերն ու կրօնաւորները, մինչեւ որ Սարգիս եպիսկոպոսը եւ Կիրակոս երէցը ժէ.րզ դարու սկիզբը մեծ անապատի հիմերն են դնում Սիւնիքում, որը ըստ Պատմիչի «եղեւ մայր եւ ծնող ամենայն անապատաց եւ առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց» (էջ 254): Յիշեալ բարենորոգիչներին աջակցում էին Ներսէս Մոկացի, Ստեփանոս, Դաւրիթ եպիսկոպոս: Իսկ Կարապետ եպիսկոպոս էջմիածնեցի «զնաց ի Սեւան կղզին եւ դայն տեղին շինեաց անապատ եւ կայ հաստատ մինչեւ ցայսօր» (էջ 253):

Ըստ երեւոյթին Սեւանայ անապատն էլ ամայացել էր, եւ այս ընդհանուր վերածնութեան ժամանակ վերակենդանանում: Տփիսիսեցի եղբայրներ Չիթաղեանները ժէ.րզ դարու կիսում նորոգում են անապատի երկու գլխաւոր եկեղեցիները՝ Ս. Առաքելոցը եւ սուրբ Աստուածածինը իրենց հաշուով եւ եկեղեցական զգեստներ նուիրում: ԺԸ. դարում նորագուում է կրկին Ս. Աստուածածնի եկեղեցին, նորոգուում է նաեւ կղզու միւս եկեղեցին Ս. Կարապետը:

Անապատն ընդարձակուում է եւ հնարաւորութիւն տալիս միաբաններ պահելու, մանրամասնութիւններ տե՛ս Շահխաթ. Բ. հտր. եր. 214—227 եւ Մմբատեան «Գեղարքունիք» եր. 115): Աշակերտներ էր տալիս, որոնք լուսաւորում էին ժողովրդին մի կողմից իրենց ճգնաւորական, կրօնաւորական կեանքով, միւս կողմից գրով եւ գրականութեամբ:

Ուշագրաւ այն է որ անապատներում մշակուում է այն կենցաղը ժամատեղերի, սեղանատեղերի, զգեստների եւ միայնակեցութեան եւ կրօնաւորական ժուժկալու-

թեան, որ կային Ղփթիւների անապատներում: Մովսէս կաթողիկոսը, վարդապետ եղած ժամանակ երբ գնում է Երուսաղէմ, այն տեղից էլ Եգիպտոս շրջադաշում է Ղփթիւների անապատները եւ վանքերը, ծանօթանում նրանց կենցաղի, ժամակարգութեան հետ եւ մեծ անապատի հաստատութեան ժամանակ օգտագործում քաղած տեղեկութիւնները (Ա. Դաւրիթեցի, էջ 285):

Ժէ.րզ դարու վերածնութեան առանձնայատուկ կողմն այն է որ վանականները ճգնաւորական կենցաղի ընտանիքները կրելով չէ միայն, որ հայ աշխարհը լուսաւորել աշխատում էին, այլ եւ յատկապէս արտաքին գիտութիւնները սորվելով, այն է օտարազգի հեղինակների գրուածներ կարդալով, թարգմանելով եւ նրանց հետեւողութեամբ նորերը կաղմելով:

Փիլիսոփայական գիտութիւնը՝ արամարանութիւն, քերականութիւն, տօմարագիտութիւն յատկապէս ուշադրութեան են առնում եւ հայ միտքը ընդլայնում, խորանում է իւր մէջ առնելով եւրոպական գիտութեան տուեալները: Հայ կրօնաւորները են լինում այսպիսով եւրոպական նոր հասանքի ջատագովները, կողմնակիցները, որոնք տարիներ շարունակ ինքնաշխատութեամբ պարապում են, հայ գրականութիւնը ճոխացնում: Քրիստոնէական բարոյականութեան այս խստապահանջ հետեւողները աշխարհիկ կենցաղի փափկութիւններից հեռանալով հանդերձ անապատում համեստ կրօնաւորի ապրուստը ունենալով, հոգու ազնուացման իւրատեսակ ուղին բռնելով երբեք չեն քաշուում արտաքին գիտութիւնների փիլիսոփայութեան այլ եւ այլ ճիւղերի ծանօթանալուց, սովորելուց: Քրիստոնէական կրօնը երբեք նրանց արդէլք չի դնում գիտութեան հետեւել ու իրենց աշխարհայեացքները ընդլայնել:

Չի կարելի պատկանանքով չկարգալ այդպիսի գիտութեան հետեւողների նախահօր Բաղէչի Ամբղօլու վանքի Բարսեղ վարդապետի այդ ուղղութեամբ աշխատանքը, որ «Անդազար եւ անձանձիր աքնութեամբ յար հանապաղ կացեալ ի դուռն իմաստից գիտութեան բաղխէր զցայդ եւ զցերեկ աղօթիւք եւ ընթերցմամբ» (Դաւր. էջ 398): Սասկսում է «Գիրք սահմանացը» կարգալ մին-


չեւ վերջը, նորից է սկսում կարգալ եր-
րորդ, չորրորդ եւ այլ անգամներ մինչեւ
«վերահասու եղեւ, որ այլոց եւս կարէր ու-
սուցանել» (էջ 392) :

Կրօնաւորի կամքի ոյժը այս դէպքում
յազթող է հանդիսանում ու հեղհեղտէ ա-
նապատներում սկսում են սովորել՝ «նախ
գրեքականութիւն . . . գինի նորա Սահ-
մանքն սկսան եւ ապա զՊորփիւրն, զՍտորո-
գութիւն» եւն եւն :

Այս գիտութիւնները ծաղկել են նաեւ
Սեւանում, որի գրադարանում ցայսօր կան
մնացած նման երկեր եւ աշխատութիւններ :

(Շարունակելի):

ԳՐԻՏ ԵՊԻՍԿՈՍ



ՀՈՂԼԵՆԳԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԺԶ—ԺԹ. ԳԱՐԵՐՈՒՄ

(Շարունակութիւն):

2.

Ղուկաս Վանանդեցու գործերը՝ թոմասի
մահից յետոյ: Վենետիկի եւ Կ. Պոլսի մրցումը
Ամատերգամի հետ: Ամատերգամի հայկական
տպարանի վերջը: Տառերի վաճառումը Մխիթար
Աբբային: «Հաւատով խոստովանիմ» 24 լե-
զուով: Զուղայեցի վաճառական Առաքելի նոր
տառերը: Գեորգ Արծրունու դրանց գնելը Թիֆ-
լիսի Ներսէսեան Գպրոցի համար:

Բազմերախտ տպագրիչ թոմաս Վանան-
դեցու արժանաւոր ինչպէս եւ իրական ժառանգն
էր Ղուկաս Վանանդեցին, իր եղբորորդին եւ
գլխաւոր գործակիցը:

Թոմասի մահից անմիջապէս յետոյ այն է
1711ին, լոյս տեսաւ իր տառերով, բայց օտար
տպարանում Զուղայեցի Յոհաննէս վարդապետի
հեղինակած «Համառօտ Քերականութիւն եւ
Տրամաբանութիւն, որ է Քերթուածիւն բառի
եւ կրթութիւն բանի», ընդ ամէնը 78 էջից բաղ-
կացած մի գիրք: Հետաքրքրական է այնտեղ,
հետեւեալ ոտանաւորը:

«Գեղ կամակար անծագ հորդէ,
Կէղ կամակոր ձանձախ յորդէ,

Յեղ զայս համր գիրք ի հարկս հողով
Հեղ զայն յամր գիրք ի յարկս յողով,
Ամաց հերձի ամաց պատուէր,
Զի էր պատուէր՝ զի նա պատուէր:»

Ինչպէս ընթերցողը նկատեց, այստեղ իրար
հետեւում են նոյն հնչումով բայց տարբեր
գրութեամբ եւ նշանակութեամբ բառեր:

Ղուկաս Վանանդեցին մեծ ջանքերով հա-
ղիւ կարողանում է տպարանի նիւթական կա-
ցութիւնը կարգի բերել եւ 1713ին վերսկսում
է իր գործունէութիւնը, Զուղայեցի մի երկու
վաճառականի ընձեռած դրամական աջակցու-
թեամբ:

Այդ տարիննա տպեց «Հայելի Աստուա-
ծաշունչ Հին Կտակարանի պարզաբանեալ
վայելչալուր Տաղաչափութեամբ, դիւրահաս եւ
համառօտապատում հոգեշահ մեկնութեամբ, մե-
ղուաջան երկասիրութեամբ Ղուկասի Դպրի
Վանանդեցոյ: Ի լոյս ածեալ հայցմամբ խնդրոյ
եւ ծախիւք Զուղայեցի Խօջազադայ Պողոսի
որդոյ պարոն Պետրոսին... յամի Տեառն 1713,
ի մեծ թուին Հայոց 1162 իսկ ի փոքր թուին 98.
ի տպարանի Ղուկասու Վանանդեցոյ,
յԱմտէլօգամ»: Գրքի սկզբում կայ նախեր-
գանք, որի վերջում կարդում ենք «... Արդ մա-
նաւանդ հոգեշահութեան քան թէ զօջաբաղու-
թեան եւ փառամոլութեան աղագաւ ըսկիզբն
արարի Աստուծով պարզաբանել զայս թարգ-
մանական Պատմութիւն Հին Կտակարանին վայել-
չալուր եւ գեղեցկայեռ աւելի քան զհազար եւ
հինգհարիւր զոյգ ոտիւք եւս եւ արձակ բա-
նիւ...: Յիշել մաղթեմ բազկատարած եւ ձեռ-
նամած աղօթիւք առ Աստուած... այլ եւ զսրբա-
կենցաղ Հայր, Հօրեղբայր եւ զվարդապետն իմ
զԹոմասս Եպիսկոպոսն Վանանդեցի Բրիս-
տոս հանգուցեալ...»:

Հետեւեալ տարին, 1714ին Ղուկաս տպեց
Սաղմոսարանը, որի մէջ դարձեալ երախտա-
գիտական տողեր է նուիրում «Թոմայ եռափայլ
Եպիսկոպոսին, որոյ յոգնաջան քրտամբքն կանգ-
նեցաւ այս գեղեցկատիպ եւ հիքոյս կտակաւ
նորին ի ժառանգութիւն ժամանեալ տպա-
րանս»:

Սաղմոսարանը զարդարուած էր գեղեցիկ
պատկերներով, որոնք փայտի վրայ փորուած էին
van Siehem ճարտար փորագրիչի ձեռքով: Այս
հրատարակութիւնն իբրեւ օրինակ է ծառայել
1780ին Կ. Պոլսում Պետրոսեանի Տպարանում
տպուած Սաղմոսարանին, որտեղ յառաջբան է